Ա Ր Ե Ւ Մ Ա Ւ Տ Ք

ԱՐՔԱԴԱՆՔ ԵՒՐՈՊԱՅԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ.

Ա. Տարի. Թիւ. 12. Հրատարակի ամէն երեքշաբթի եւ ուրբաթ տասնեկուն տասն հատ է։ Գործակալ. — Բարիզ, Աղոյ Մոնթալեմպերտ, 23, rue de Fleurus. 1859 Յունիս 15.
— Գոյիս, ... — Իրլանդ, Աղոյ Գլլիսուրտոն, — Եշիպտոս, Աղոյ Տէր Գասպարեանց Եղբարք։

ԿԱՅՍՐՆ ԱՌ ԿԱՅՍՐՈՒՆԻ.

Քովրիանա, 24 յունիս 9 ժ. 15 ր. եր.

Մեծ պատերազմ և մեծ յաղթութիւն։

Բոլոր Աւստրիայի բանակը կոխուի մատաս։

Պատերազմի ճակատը հինգ մղոն տարածութիւն ունէր։

Ամէն զիրքերու տիրեցինք, շատ Մնպոնաթնէր, դրօշներ առինք և կալանաւոր ըրինք։

Այս բոլորին ուրիշ պարագաներ գրել անհնարին է։

Պատերազմը տեւեց աւտու ժամը չորսէն մինչև երեկոյին ժամը ութը։

ՆԱՊՕԼԵՕՆ.

Այս հեռագիրը շարած առաւ հաստ. Բարիզ և խուկոյն Ենվալիտի Մեղանեթը սկսաւ որոտալ և հաստարակութեան աղդ տանել նոր յաղթութեան մը։ Ամէն մարդ հրապարակ կ'իջնէր և խումբ խումբ ոգեւոր տուչ կը հատարուէր տեղեկութիւն առնելու համար։ Շատ չ'անցաւ մայրաքաղաքիս կերպարանքը փոխուեցաւ։ Փոնութեան և զարմանքի հով մը ժողովուրդին դէմքը կը յուղէր։ Փոնութեան՝ վասն դի այսպիսի պատերազմի հեռանքն է Իտալիայի անկախութիւնը, և զարմանքի՝ վասն դի այսքան Եւրպատաւ պատերազմ կրնէ անքուր բան է մեր դարերու մէջ։

Գամ քան զգամ հայրենական հոգիր սկսան վառիլ, բարբարիլ, հոտգոյն դրօշները պատուհաններու քով ծփիլ, գանազան լապտերները պատերու վրայ շարուիլ և հայտնապես տեսարան մը յայտնել հանդիսականին առջև։

Երբ Երեկոյ եղաւ կարգէ զուրս ասնուխուսը մը բոլոր Բարիզը լոյսով ողողեց։

Պարտարին մէկ ծայրէ միւսը կասպոյտ, սպիտակ կարմիր լոյսի հոսանք մ'էր ուր կ'երթեւեկեր անհուն ամբոխ մը բարբառելն սրբբիս հայրենիքի փառքով և տարտարեան Նառնդով։

Քաղքիանաի հանդիսաւոր պատերազմը, Իգոյիսի ազդուելն ջնարհելէ հան, ընդհանուր Եւրոպայի լուսաւորութեան ալ պիտի օգտէ, լուսաւորութիւն՝ որու վերջին Թշնամին էին դիշերադէմ Աւստրիա և իր հոփանիին ենդրեն փթթած Թղուկ իշխանները և անուկ կրոնաւորները։

Կայսրն ու. Կայսրուհի.

Քովրիանա, 25 յունիս 1 ժ. 30 ր.

Նիկոլաոն պատերազմի վրայ մանր և անվրէպ ծանութիւն տալ դեռ անհնարին է։

Այս դիշեր Թշնամին ետ քաշուեցաւ։

Ես դիշերը անցուցի այն անենկին մէջ ուր Աւստրիայի կայսրը կրգանուէր պատերազմի աւտուն։

Նիկոլ գրասենեակ Ֆրանսայի մարշալի անուն առաւ։

ՆԱՊՕԼԵՕՆ.

Կայսրն ու. Կայսրուհի.

Քովրիանա, 26 յունիս 11 ժ. 55 ր. առաւ.

Աւստրեան զորքը, որ Մինչիոյի ոչ եզրը անցեր էր լոյսը բանակով մեր վրայ յարձակելու համար, ասիրատեցաւ իրեն բոլոր դիրքերը Թողուլ և գետին ձոր եզրը ապաւինիլ։

Էսթեոի կամուրջը վառուի առին։

Թշնամին շատ մեծ կորուստներ ըրաւ. բաղդատելով՝ մերինը աւելի նուազ է։ Երաւն Մնպոնաթ, երեք դրօշ առինք և եօթ հազար կալանաւոր ըրինք։

Նիէլ զօրապետը և իր զումարտակը փառքով զրահուեցան, ինչպէս նաև բոլոր մարտաղիր զումարտակները :

Օժէ զօրապետը թևը կորուս (հրանօթէ մը) :

Սարտինեան բանակը, որ մեր ձախ թևը կըպաշտպանէր, թշնամիին զգալի կորուստներ ընել տուաւ կատաղի քաջութեամբ կռուելէ ետքը, թիւով գերագոյն զօրքերու դէմ :

ՆԱԲՕԼԷՕՆ.

Յունիսի 24ին պատերազմը պիտի անուանի Սոլֆէրինոյի պատերազմ : (Մօնիթէօր.)

ԻԴԱԼԻԱՅԻ ԲԱՆԱԿ.

Օրական պատուէր.

Բանակատեղի Գավրիանա, 25 յունիս.

Զինուորք,

Թշնամին կ'երևակայէր որ պիտի կրնայ անակընկալ առնեն մեր վրայ յարձակիլ և զմեզ քշել Քիէզայի եզրէն անդին : Ինք հիմա Մինչիօ գետին միւս կողմը կը գտնուի :

Արժանօրէն Ֆրանսայի պատիւը պաշտպանեցիք և Սոլֆերինոյի պատերազմը կը հաւասարի Լոնաթոյի և Գասթիլյօնի յիշատակներուն և կը զանցանէ ևս :

Լման տասներկու ժամ, հարիւր յիսուն հազար զինուորէն աւելի բանակի մը ուժգին յարձակումները մղեցիք : Թշնամիին ոչ բազմաթիւ ռումբերը, ոչ ամրագին դիրքերը, որ ամփոփուեր էր երեք մղոնի ճակատ մը շինելով, ոչ օդին հրայի տաքութիւնը կրցան զսպել ձեր առաջնումը :

Հայրենիքը երախտագէտ իմ բերնով շնորհակալ կ'ըլլի այսքան յարատև և քաջ վարմունքէ մը, բայց, ինծի հետ, հայրենիքը կողբայ զանոնք որք ինկան անյարիր պատւոյ դաշտին վրայ :

Թշնամիին ձեռքէն երեք դրօշ, երսուն թնդանօթ առինք, և վեց հազար կալանաւոր ըրինք :

Սարտինեան բանակը նոյն արիութեամբ կռուեցաւ թշնամիին դէմ, որ գերագոյն թիւով և ուժով իր վրայ յարձակեցաւ : Յիրաւի արժանի է, այն ձեր քովը քալելու :

Զինուորք, Թափուած այսքան արիւնը անօգուտ չպիտի ըլլի Ֆրանսայի փառքին և ազգերու բարօրութեան համար :

ՆԱԲՕԼԷՕՆ.

Կայսրն առ Կայսրուհին.

Գավրիանա, 28 յունիս.

Մեր զօրքերը Մէնչիօ գետին ձախ եզրը կ'անցնին դիմադրութիւն չգտնելով : Թշնամին քաշուելով կը քաշուի դէպ ի ներս :

Կայսրն առ Կայսրուհին.

Վալէճիօ, 1 յուլիս.

Բոլոր բանակը Մէնչիօէն անցաւ : Սարտինեան զօրքերը Բէսքիէրան կը պաշարեն : Ընդունած զօրքի օգնութիւնս և 35,000 մարդերու գալուստը զորս իշխան Նաբօլէօնը կը բերէ (Թօսքանայէն) կարողութիւն տուին ինձ Վերոն քաղքին մօտիկ անվտանգ և ապահով կենալով, վասն զի զումարտակ մը Գօիթօ թող տուի որ Մանթու քաղքին ճամբաները զննէ և ուրիշ զումարտակ մը կը հաւքեմ Պրէշիայի բոլորտիքը Թիրօլի կապանները դիտելու համար :

Կայսրն առ Կայսրուհի.

Վալէճիօ, 7 յուլիս.

Զինադադար մը հաստատուեցաւ Աւստրիայի կայսեր և իմ մէջ :

Գործակալք պիտի անուանուին և որոշեն պիտի թէ՝ որքան տևելու է այն և թէ՝ ինչ են պայմանները:

ԱՒՍՏՐԻԱՅԻ ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹԻՒՆ.

Աւստրիայի բարբարոսութիւնը, բիւր օրինակով հաստատուելէն ետև, այնպիսի դէպքով մը կը պսակուի որ մարդու սոսկում կուտայ և որ վայրենիներու մէջ իր նմանը ունի միայն : Այս դէպքը յիշել բաւական չըթուիր մեզ. կ'ուզենք Պ. Գավուրին նամակը թարգմանել որպէս զի կասկածի տեղի չմնայ ընթերցողին կամ լըսողին միտքին մէջ :

« Նախկին յայտագիրի մէջ պատիւ ունեցայ ճանչցնել մեր Վեհափառ Թագաւորին դեսպաններուն այն կողոպտումները զորս Աւստրիայի բանակը ըրաւ Բիէմոնթէի գաւառներու մէջ : Հիմա կը պարտաւորուիմ ազդ առնել ձեզ, որ այս նիւթի վրայ օրինաւոր քննու-

թիւով տասնպատիկ աւելի էին ։ Կարիպալտին օգնութեան կը հասնի իր Որսորդներու և թշնամին կ՚ստիպուի իր տեղը դառնալ ։ Այս կռուին մէջ կը վիրաւորուի Թիւրր անուն մաճառ հազարապետը ։ Պրէշիայէն Կարտա լիճին եզրը կուգայ, կ՚սկսի դէպ ի հիւսիս քալել և Սալօ քաղաքը առնուլ ։ Աւստրիական շոգենաւ մը եզրին կը մօտի և այնպիսի ռումբեր կ՚ընդունի իր յանդգնութեան պատասխան որ շատ չ՚երթար խորասոյզ կ՚անհետի իր նաւաստիով և կահով ։

Սալօի կողմերը կը թողունք Կարիպալտին այսօր և կը փութանք Պրէշիայի բնակիչներու համար գրած հրատարակումը մեր ընթերցողներու առջև դնել ։

Բնակիչք Պրէշիայի,

Երկրպագելի տօնախմբութիւնը որով ընդունեցիք Ալպեան Որսորդները նոր փաստ մ՚է ձեր հայրենասիրութեան աշխոյժին ։ Վսեմ տեսարանը որ մէկէ ի մէկ երեւցաւ ձեր քաղքին մէջ երբ վտանգի զանգակը կը թնդէր, յայտնեց որ արժանի էիք ձեր համբաւին (1) ։

Երբ ազատութեան ձայնը լսելի եղաւ ձեր մէջ, միահամուռ վազեցիք Ալպեան Որսորդներու հետ և ցոյց տուիք որ ոչ միայն նախանձաւոր պահապան էք նորէկ անկախութեան այլ և անզրդուելի զինուորութիւն ունիք ձեր լանջով պաշտպանել զայն և պահել ձեր արիւնով ։ Պրէշիայի զաւակներ փառք ձեզի ։

Թշնամիք տակաւին այս կողմերը կը թալլեն, կը կապտեն, կը հարստահարեն, բայց ա՛լ բանակի մը զօրութիւն չ՚ունին և չ՚են կրնար ձեր քաղաքը սպառնալ ։ Փախստեայ խումբեր են անոնք, որք մեզմէ չպաշարուելու համար կրնակ կը դարձնեն և ուրկէ որ անցնին իրենց բարբարոսութեան ու նողկալի բռնաւորութեան շաւիղ մը կը թողուն ։

Ի վերջէ իրենց բուռն իշխանութիւնը հիմն ի վեր կը կործանի ։

Հայրենիքին վրիժառու կամքը կատարելու բոպէն հասաւ. հիմա է ժամանակ պատերազմի դաշտին և Մանթուի կախաղաններու վրայ մեռած մեր եղբայրներու անունին համար սպառազէն կռուիլ ։ Ձեր փառաւոր աւանդութիւնները շարունակելու օրը հասաւ. մի՛ թեթևիք, անցեալը մոռցուկ չ՚է փառքին համար ։

Թշնամին այս աղւոր երկիրէն վռնտուելով բանի և խոպառ, կը կատղի, կը մռնչէ և կը գիշատէ ։ Իր այս կատղութեան դէմ դրէք զօհի քաջութիւնը ։ Եկէք արշաւակի կամաւորներու զաւերը շատցընելու ։ Ձեր ազատութիւնը ձեռք բերելու համար ամէն բան պէտք է որ աչք առնուք ։

Եռագոյն դրօշը, որ ձեր սրտին կուռքն է, հողմալիր կըծփի գլուխնուդ վրայ և կը պատուիրէ ձեզ հայրենասիրութիւն ու քաջութիւն ։

Թո՛ղ դաշնադիր պանծալի բանակները զձեզ թշնամիին լուծէն հանելով ըսեն վստահութեամբ. Ազատուողք արժանի են ազատողներուն ։

Պրէշիա 19 յունիս 1859

ԿԱՐԻՊԱԼՏԻ

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ.

— Աւստրիայի զունդերը կը հեռանան կորագլուխ, կ՚ամփոփուին իրենց կայսեր քով և կը թողուն, վախնալով որ չպաշարուին, նաև Հռոմայի տէրութեան հողը, ուր իրենց ներկայութիւնը, տաս տարիէ ի վեր, Հռովմայեցիներու հոգին բերանը տարաւ. Բաբին հնազանդ քաղաքները տեսնելով որ, Աւստրիայի դրօշակը կը հեռանայ, մէկէն Իտալիայի երեքգոյն դրօշը կը տնկեն, կ՚ապստամբին, կը զինուին և Վիկթօր-Էմմանուէլ արքային պատգամաւոր կը ղրկեն իր իշխանութիւնը ճանչնալու համար ։ Թօսքանայի, Բարմայի, Մօտենայի հետևելով հայրենիքի միութիւնը կ՚ուզեն և զինքը կ՚ընտրեն թագաւոր ։ Արդէն Պօլօյն, Ֆերրար, Իմօլա, Ֆաէնձա, Ֆօրլի, Սէղէնա, Րիմինի, Րաւէնը, Անքօնը և այլն և այլն, նոր քաղաքապահ ժողովներ հաստատեր և բարեկարգութեան հոգը անոնց յանձներ են ։ Այս մասնաւոր և անակնկալ խռովութիւնները շատ լաւ կը յայտնեն Գարտինալ Անթօնէլլիին իշխանութեան հետևանքը, որ չ՚ուզեց երբեք Ֆրանսայի վեհափառ կայսեր խրատներու ունկն դնել և հարկաւոր նորոգումներ ընել ։ Ցոյս կայ որ ապստամբութիւնը պիտի դադրէ իր շփոթը և պատերազմի ատեն, քաղաքական ծանր խնդիրներու տեղի չպիտի տայ ։ Վիկթօր-Էմմանուէլ շատ գոհ չէ իրեն եղած առաջարկութիւնէն, և չէ ընդուներ զայն, կ՚ըսեն ։ Անհնարին է ապագան գուշակել, բայց առուգիւ կրնայ հրատարակուիլ որ Հռոմայի տէրութիւնը բարի նորոգումներ պիտի ընդունի Նաբօլէօն Գին պաշտպանութեամբ ։ Վեհափառ կայսրը հիմա Իտալիայի ազնուայլ ժողովուրդներէն խոհեմութիւն և քաջութիւն կը խնդրէ. պատերազմէ ետքը անոր փափաքէնը պիտի ընդունին ։ « Իտալեանք, այսօր եղէք զինուորք, վաղը պիտի ըլլաք քաղաքացի մեծ երկրի մը ։ »

— Պարոն Պրէնիէ սեպտունը ճամբայ ելաւ Նաբօլի երթալու համար Ֆրանսայի տէրութեան կողմէն ։ Իր պաշտօնն է քաղաքական յարաբերութիւնը նորէն հաստատել երկու տէրութիւններու մէջ ։ Կարծենք ա՛լ դըժուարութիւն չկայ որ իր պաշտօնը լիապէս յաջողի,

(1) Պրէշիա հայրենասիրութեան մեծ անուն ունի Իտալիայի մէջ։

և անոնցմէ բնիկ չեղողները վռնտուին դբսութիւնէն հետու։ Աւստրիայի հետ ժէղուիթներու բռնութիւնն ալ պիտի կորի Իդալիաէն։

— Բիէմոնթէի վեհափառ Թագաւորին կողմէ Պ. Ադէկլիս մարգիզը արտաքոյ կարգի տեսուչ զրկուեր է Հռոմայի տէրութեան ապստամբ գաւառներուն։ Այս նշանակելի է։

— Բարձրապատիւ Սախտ բաշան Սուէզի պարանոցի ձեռնարկութիւնը արգիլեր է մասնաւոր հրովարտակով։ Այս արգելքը մեծ տպաւորութիւն ըրաւ հոս։ Անգլիային մտաւը մէջն է, կ'ըսեն։

— Խռովութիւնը երթալով կը տարածուի Հռոմայի տէրութեան մէջ և իրաւունք կուտայ այն անձերու որք կ'ըսեն. թէ Աւստրիայի և Ֆրանսայի զինուորները չ'ըլլին Բարին Թագաւորութիւնը չկրնար, օր մը, կանգուն մնալ։

Տրտմալի է այս տեսարանը, բայց աւելի տրտմալի է այն լուրը զոր հեռագիրը կը բերէ Բերուզ քաղքէն. « Երկու հազար Հէլվետեան զինուորը չորս ժամ քաղքին ապստամբներուն հետ կռուեցան և տուին դայն։ Շատ արիւն Թափուեցաւ և սոսկալի անգութիւններ եղան։ »

Այսպիսի յաղթութիւններ բարբարոսեան վնաս կուտան քան թէ օգուտ։ Բերուզ քաղքին առումը ապստամբելու աւելի մեծ զրգիռ պիտի պատճառէ միւս քաղքներուն դորս մի առ մի յաղթել երկու հազար Հէլվետեան վարձուոր զօրքի արուած չէ։

Հէլվետիային անեղծելի նախատինք է իր զաւակներուն այս վարմունքը։ Ազատութեամբ սնած, ազատ ընտանիքի որդի, ազատ զրօշի զինուոր երբ հայրենիք կը գտնուին, օտար հողի վրայ միշտ ազատութիւնը ոտանելու համար կռուեր են։ Իրենց ձեռքով Նաբոլիայի սոսկալի բռնաւորութիւնը կը պահուի, իրենց դէնքն է որ հիմա ազատասէրներու արիւնը կը Թափէ Հռոմայի մէջ։ Արնավուտներէն զատ ժողովուրդ մը չկայ Եւրոպայի կողմերը որ այսպիսի վատութիւնը փառք սեպէ։

— Բրեսս օրագիրը տխուր լուրեր կուտայ Երզրումի վրայօր։ Յունիս 2, առաւ ժամը տասուկէսին երկրաշարժը սկսեր է հարաւէն դէպ ի հիւսիս և տեւեր է քսան բոպէ։ Քաղքին կէսը հիմնովին կործաներ է և շատ մարդիկ մահ գտեր են փլատակներու տակը։ Ժամը 11ին շարժը նորէն սկսեր է, բայց նուազ ուժով, և տակաւին չկործանածը աւերեր է խստաւ։ Բերդը և հին պատուարները, հիւպատոսարանները, պալատը և ուրիշ շէնքերը փլեր ինկեր են։ Ազատողները զաշտերու վրայ սփռեր են և վոմերկիկ կ'ապրին հոն։ Քաղաքապետը, Արիֆ բաշան, զինքը ազատելու համար ամէն բան ձգեր և շատ հեռու տեղ ապաւիներ է տաղաւարի տակը։ Գողերը սկսեր են Թալանել։ Բարձրագոյն Դուռը այսպիսի բաշա մը դատաստանի առջև տանիլ կը պարտաւորի, և ոտամսկան օրէնքով դատել զանիկա, վասն զի բաշա մը որ իր քաղաքը կը Թողու դասալիք զինուորէ մը աւելի յանցաւոր է։ Այս այն բաշան է որ կը պատասխանէ Թէ « Տաղ չաքալը զիմազ » երբ իրեն զանգատ կ'ըլլայ Գիւրտերու վրայօր։ Կ'երևի որ ոչ միայն լեռները այլ և քաղաքները առանց չափազի չեն կրնար մնալ։ « Ողբամ զքեզ թուրքաց աշխարհ... »։

— Քոսսիթ Երևելի հայրենասէրը, որուն անունը նոր էն կը լսուի Եւրոպայի մէջ, 1802, սեպտեմբեր 16ին ծնած է։ Ուսումը աւարտելէն ետև փաստաբանի վկայագիրը առաւ և սկսաւ Բեշթի դատաստարանի մէջ իր տաղանդը և ճարտարիսօսութիւնը յայտնել։ Իր կարծիքները տարածելու և հայրենիքին ազատութեան օգնելու համար հանդէս մը հրատարակեց մաճառ լեզուով։ Իրրև վարձ այս աշխատութեան և փոխարէն իր ազատասիրութեան, չորս տարի բանտի դատապարտուեցաւ։ Ընդհանուր ներոզութեան մը մասնակից ըլլալով բանտէն ելաւ և Բեշթի օրագիր անունով հրատարակումի մը ձեռք զարկաւ։ Հայրենասէրը զինք ազգային ժողովի անդամ ընտրեցին և այն տեղ, մէկ կողմէ իր զրիչով և միւս կողմէ իր լեզուանի ու հզօր ճառերով, հասարակութեան համակրութիւնը գրաւեց բոլորովին։ Անանկ որ 1848ին խռովութեան եկած տեղն, տէրութեան ապարէզին մէջ ինքն էր ոգի ընդդիմութեան որ կ'ուզէր Աւստրիայի անտանելի լուծը Թօթուել։ Իր կարգէ դուրս յաջողութիւնը և Տէմպէսկի, Պէմ, Գլաբքա զօրապետներու զիւցազնեայ քաջութիւնները Մաճառստանի անկախութիւն տուեր էին, երբ Ռուսիայի զօրքերը և Վեօրկէ զօրապետին մատնութիւնը մաճառ ազգը արիւնի, սուգի, գերութեան և սոսկալի աղէտքներու մէջ գլորեցին։ Նախնի արտօնութիւնները, ազգային էութիւնը, հին դաշնագրութիւնները անհետ եղան և Մաճառստան եղաւ մէկ մեծ գաւառ Աւստրիայի տէրութեան։ Քոսսիթ և միւս հայրենասէրք ինկան վտարանդի օտար երկիրներու մէջ, բողոքելով ազգերու առջև, իրենց հայրենիքին իրաւունքը առաջ բերին. այլ ի զուր։ Աւստրիան իր բռնամոլ կամքը կատարեց և այսօր տասն տարի է որ Մաճառստանի քաջ զաւակները կը Թափառին անմխիթար բայց ոչ անյոյս։

Le Dieu qui rend la force aux plus faibles courages
Soutiendra ce roseau plié par les orages (1).

(1) Voltaire.

պարագայները կը հրատարակէ և եղածը նկարագրելէ ետքը կ՚աւելցընէ. « Սարտէնիայի բանակը մեծ կորուստներ ըրաւ ։ Պաշտօնատարք, մեռած 49 և վիրաւոր՝ 167 ։ Մեռած ստորին պաշտօնատար և զինուոր 642, վիրաւոր՝ 3,405 ։ Աներեւոյթ եղած 1258 հոգի ։ Ընդ ամենը պատերազմէ դուրս 5,525 հոգի ։

Ֆրանսայի բանակը կորուս 12,000 մարդ մեռած կամ վիրաւոր. 720 պաշտօնատար պատերազմէ դուրս, որոնցմէ 150ը անկենդան ։ Վիրաւորներուն մէջ կը գտնուին Լատմիրո, Ֆօրէ, Օժէ, Տիեօ, Տուէ զօրավարք... ։ Աւստրիային բանակը 9 զօրաբանակէ կը բաղկանար, որ 250,000էն մինչև 270,000 զինուոր ըսել է ։ »

— Օրագիր մը Օժէ զօրավարին մահը կը հրատարակէ ։ Այս քաջ և տարաբաղդ անձը 1809ին ծնած է և մասն ունի Ալժերիայի և Ղրիմէի պատերազմներուն։

— Սարտինեան բանակը երեք զօրավար կորուսեր է, Մօլլար, Բերիէ և Արնալտի ։

— Սօլֆէրինօէն եկած նամակները և լուրերը ընդհանրապէս կը հաստատեն որ Նաբօլէօն Գ մեծ արիութիւն ցոյց տուեր է կռուին ատեն և բնաւ չ՚է զատուեր իր բանակէն ։

Հռոմէական խնդիրը, որ Իտալիայի պատերազմին հետ նորէն սաստկացաւ, ասկէ տասն տարի առաջ Վեհափառ Կայսեր ուշը գրաւած էր, և հետագայ նամակէն կ՚իմացուի իր դիտաւորութիւնը ։ Այս նամակը պատմական արժէք ունի և ակներև կը յայտնէ տեսակ մը կրօնաւորներու անուղղելի յամառութիւնը ։

Իմ սիրելի Նէյ,

Ֆրանսայի Հանրապետութիւնը բանակ մը չ՚ուղարկէր ի Հռոմ, Իտալիայի ազատութիւնը հոն խեղդելու համար, այլ ընդ հակառակն զայն կանոնաւորելու միջոցով որ չափէ դուրս չ՚ելնէ, և անոր հաստատուն հիմ մը տալու համար՝ բարութեան աթոռին վրայ նորէն դնելով իշխանը, որ ուրիշ իշխաններէ առաջ համարձակօրէն գլուխ եղաւ կարեւոր նորոգումներու ։

Վշտալիր կ՚իմանամ որ Ս. Բաբին բարեսէր դիտաւորութիւնները, ինչպէս նաև մեր ըրածը, ամուլ կը մնան կիրքերու և թշնամի ազդումներու զրգռելովը ։ Կ՚ուզեն որ աքսորի և կոյր բռնութեան վրայ հիմնուի Բաբին դարձը իր ժողովուրդին մէջ ։

Ըսէ՛ք իմ կողմէ Րօսթօյան զօրավարին. Իր պարտքն է չներել բնաւ երեքգոյն դրօշին հովանւոյ ներքև այնպիսի գործ մը որ կրնայ մեր զինու օգնութեան թխր նպատակ մը տալու ։

Բաբին մարմնաւոր իշխանութեան վերականգնումը կը համառօտեմ այս չորս թէութեան մէջ. Ընդհանուր ներողութիւն, աշխարհական տնտեսութիւն, Նաբօլէօնի օրինաւորութիւն և ազատական տէրութիւն ։

Սիրտս վիրաւորուեցաւ կարդալով երեք քարտինալներու յայտագիրը, և ցաւ է ինձ տեսնել որ Ֆրանսայի անունը, իր քաջ զինուորներու ներզութիւնները անգամ չ՚են յիշուած հոն ։

Մեր դրօշին կամ մեր հագուստին (uniforme) եղած ամէն մէկ նախատինքը ինձ ուղղակի կը դպի, ուստի կ՚աղաչեմ լաւ մը հասկցընել որ եթէ Ֆրանսա չվաճառէր իր ծառայութիւնները, կ՚ուզէ որ իր զոհերուն և անշահասիրութեան համար երախտագիտութիւն յայտնուի ։

Երբ մեր զօրքերը Եւրոպայի բոլորտիքը պտըտեցան, ամէն տեղ թող տուին, իրենց շաւիղ իրենց քայլերու, միջին դարու անօրէնութիւններուն աւերը և ազատութեան սերմը ։ Չպիտի ըսուի որ 1849ին Ֆրանսեան բանակ մը ուրիշ կերպով վարուեցաւ և ուրիշ հետևանք մը բերաւ ։

Ըսէք զօրավարին որ իմ կողմէս շնորհակալ ըլլի բանակին իր ազնիւ վարմունքին համար ։ Լսեցի և շատ կը տրտմիմ որ նաև նիւթական կերպով չը խնամուիր ինչպէս որ կը վայլէ ։ Մեր զօրքերը հանգստօրէն տեղաւորելու համար պէտք է որ բան մը չխնայուի ։

Ընդունեցէք, իմ սիրելի Նէյ, հաւաստիքը իմ անկեղծ բարեկամութեան ։

ԼՈՒԻ-ՆԱԲՕԼԷՕՆ ՊՕՆԱԲԱՐԴ.

Համարատու Տըլէդր.

Ի ԲԱՐԻԶ, ԱՐԱՄԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.
Paris.— Typographie Arménienne Walder, rue Bonaparte 44.